Պարույր Սևակ

Հպարտանում եմ

Ես հպարտ եմ իմ ճյուղերով ու սաղարթով,
Բայց առավել՝ իմ արմատով
Եվ իմ բնի վաղեմությամբ.
Ժողովրդիս ծերունական
Խիստ բնական
խոհեմությամբ,
Բայց ավելի՝
Նոր շիվերի
դալարությամբ -
Նրա ջահել որդիներից հենց լավերի
խելառությամբ...
Ես հպարտ եմ մի բուռ հողով,
Թե աճում է այնտեղ խաղող:
Ես հպարտ եմ ջրով մի կուց,
Թե նա մեկին տասն է տալիս
Մի թիզ արտից և կամ այգուց...
Անշահադետ օգնություն եք թե ցույց տալիս՝
Ես հպարտ եմ ձեր օգնությամբ.
Թե չեք թողնում հանգստանալ մարդավարի՝
Ես հպարտ եմ իմ հոգնությամբ.
Ստիպում եք մի կո՞ղմ քաշվել ասպարեզից՝

Ես հպարտ եմ իմ ճգնությամբ...
Եթե պետք է լավ հասկացվել,
Եթե պետք է խոր զգացվել
Լոկ եղածի նոր կրկնությամբ՝
Ես հպարտ եմ
Չհասկացվող
Եվ չզգացվող
Իմ ինքնությամբ.
Շատ-շատերից չկարդացվող՝
Բայց և այնպես իմ սեփական՛ ձեռագրով.
Այլոց կողմից չարդարացվող՝
Բայց և այնպես իմ սեփական՛ ծրագրրով.
Ուրիշների խնջույքի մեջ
Թող ո՛չ մի դեր չխաղացած՝
Բայց և այնպես ի՛մ հնձանով.
Թեկուզ խռպոտ ու բաղաձայն՝
Բայց ի՛մ ձայնով.
Թո՛ղ որ անզոր՝
Սակայն արդա՞ր իմ ցասումով.
Թո՛ղ որ իզուր՝
Բայց բնակա՞ն իմ հոսումով.
Եվ անտարբեր լրջությա՛ն դեմ՝
Թո՛ղ որ գուցե անհետևանք և ապարդյուն,
Բայց և այնպես միտք խմորող իմ տաք վեճո՞վ.
Անփառունակ-երկարատև կյանքի դիմաց՝
Իմ մկրտված կյանքի վերջո՞վ...
Հպարտ եմ ես
Իմ փայփայած նպատակով,
Թեկուզ նրան չհասնե՞մ էլ
(Մեղքը կընկնի ոչ իմ վզին).

Թեկուզ նույնիսկ իզուր անցած
Ուրախ ու նուրբ իմ կատակով
(Տափակները չհասկացա՛ն).
Իմ կտակով, թեկուզ գիտեմ,
Որ երբևէ չի կատարվի
(Մեռածի՛ն էլ քիչ են հարգում).
Իմ զտարյուն հովատակով,
Եթե չտա նույնիսկ սերունդ
(Նա ի՞նչ անի - մատա՛կ չկա)...
Եվ, վերջապես, հպարտ եմ ես,
Հպարտ եմ ես իմ... գդակո՛վ,
Թեպետ և նա վաղո՛ւց ծակ է
(Ճիշտ խոսողի խեղճ գդակը,
Ինչպես գիտեք, ծակ է լինում)...
Ինձ թույլ տվեք հպարտանալ
Եվ կարծեցյալ իմ բարդությամբ՝
Թե լավ գին են տալիս միայն պարզունակին
Ու պարծենում ա՛յն պարզությամբ,
Որին անգամ չի պղտորում
Ո՛չ արյունը,
Ո՛չ սմբակը,
Ո՛չ էլ կեղտը...
Ինձ թույլ տվեք, վերջի՛ն անգամ,
Խիզախի պես հպարտ զգալ
Հնարավոր իմ պարտությամբ,
Ինչպես նաև... նաև իմ այս հպարտությամբ,
Որ թերևս անտեղի է...

21, 23.VI.1957թ.
Մոսկվա